ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/1

ք. Երևան <<08>> 02 2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և Նժդեհ Պետրոսյան Ա/Ձ-ն, ի դեմս Ն. Պետրոսյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու որպես կանխավճար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Կատարողին վճարել որպես կանխավճար վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1300000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել կանխավճար պայմանագրի գնի 100% չափով համաձայն N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

4.3 Պատվիրատուն կանխավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման ավարտից հետո՝ հանձման–ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հետ են գանձվում Կատարողին որպես կանխավճար փոխանցված գումարից:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018562 ՀՎՀՀ 02512868 Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ----------Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	Ա/Ձ Նժդեհ Պետրոսյան ք. Երևան, Կոմիտաս 46շ., բն. 23 ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ Հ/Հ 16047037012500 ՀՎՀՀ 20124141 ----------Ն. Պետրոսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
«08» «02» 2018թ կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/1 գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույց

Գնման առարկա են հանդիսանում ներկայացուցչական ծառայությունները
/այսուհետ՝ Ծառայություն/

հազ. դրամ

Գնման առարկայի անվանումը	Բնութագիր	Չափման միավորը	Ենթակա է գնման 2018թ. ընթացքում 09.08.01.01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրից, ըստ պահանջի /անհրաժեշտության/		
			Քանակը	Միավորի գինը	Ընդամենը՝ ոչ ավել քան
/79111200-1/ Ներկայացուցչական ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է ըստ պահանջի ներքոնշված նկարագրությանը համապատասխան ապրանքատեսակների ձեռքբերման հետ կապված ծառայությունների մատուցումը.**				1300.0
Կոնյակ 1	Կոնյակ 10 տարի հնեցմամբ, թափանցիկ փայլով, առանց նստվածքի և կողմնակի խառնուկների, բաց դարչնագույնից մինչև մուգ դարչնագույն ոսկեգույն երանգով, տվյալ տեսակի կոնյակին բնորոշ համով և բուրմունքով, առանց կողմնակի համի և հոտի խմիչք, էթիլ սպիրտի ծավալային մասը 40%-ից ոչ պակաս, շաքարների զանգվածային խտությունը 7-ից մինչև 20գ/դմ3, մեթիլ սպիրտի զանգվածային խտությունը՝ 1,0 գ/դմ3-ից ոչ ավել: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի N 954-Ն որոշման, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	լիտր	1	20.0	
Կոնյակ 2	Կոնյակ 20 տարի հնեցմամբ, թափանցիկ փայլով, առանց նստվածքի և կողմնակի խառնուկների, բաց դարչնագույնից մինչև մուգ դարչնագույն ոսկեգույն երանգով, տվյալ տեսակի կոնյակին բնորոշ համով և բուրմունքով, առանց կողմնակի համի և հոտի խմիչք, էթիլ սպիրտի ծավալային մասը 40%-ից ոչ պակաս, շաքարների զանգվածային խտությունը 7-ից մինչև 20գ/դմ3, մեթիլ սպիրտի զանգվածային խտությունը՝ 1,0 գ/դմ3-ից ոչ ավել: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի N 954-Ն որոշման, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	լիտր	1	50.0	

Գինի	Գինի կարմիր, խաղողի սպիրտային խմորման ճանապարհով ստացված գինիներ ըստ արտադրության. բնական. էթիլային սպիրտի ծավալային մասը՝ չոր (9%-10%), չոր հատուկ (14%-16%), կիսաչոր (9%-13%), կիսաքաղցր (9%-12%), հատուկ, չոր (14%-20%), թունդ (17%-20%), կիսաաղանդերային (14%-16%), աղանդերային (15%-17%), ըստ որակի և հասունացման ժամկետի՝ երիտասարդ, առանց հասունացված տեսակավոր և հավաքածուական, փաթեթավորումը: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի:	լիտր	1	1.8
Ջուր	Ջուր, ապակյա շշով 0,5լ,՝ խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, շշալցված 0,5լ տարողությամբ ապակյա շշերով՝ ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի:	շիշ	1	0.17
Մրգահյութ	Պատրաստի օգտագործման բնական հյութ՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց, արտաքին տեսքը պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0.2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0.8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003:Անվտանգությունը և մակնանշումը՝ ըստ ՀՀ կառավարության 26.06.2009թ.-ի թիվ 774-Ն որոշմամբ հաստատված «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	լիտր	1	0.43
Սուրճ 1	Սուրճ աղացած, բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տտիպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, խոնավության զանգվածային մասը՝ թողարկման ժամանակ՝ 4 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 7%-ից ոչ ավելի: Կոֆեինի զանգվածային մասը հատիկավոր և աղացած սուրճում՝ 0,7%-ից ոչ պակաս, աղացվածքի մեծությունը՝ N 095 մաղով անցնող սուրճ 98,5%-ից ոչ պակաս «թուրքական» սուրճի համար և 90,0 %-ից ոչ պակաս մնացած սուրճերի համար: Կողմնակի խառնուկների ներկայություն չի թույլատրվում:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	2.5
Սուրճ 2	Սուրճ լուծվող, բնական լուծվող սուրճ, չորացրած փոշու վիճակում, բնական բոված սուրճի խտածո, նախատեսված տաք և սառը ըմպելիք պատրաստելու համար, խոնավության զանգվածային մասը՝ թողարկման ժամանակ՝ 4,0 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 6,0 %-ից ոչ ավելի, կոֆեինի զանգվածային մասը՝ 2,3 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 4,7 pH-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	13.0
Կոնֆետեղեն	Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	2.5

Ցիտրուսային միրգ 1	Նարինջ թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	0.54
Ցիտրուսային միրգ 2	Բանան թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	0.95
Ցիտրուսային միրգ 3	Մանդարին թարմ, I պտղաբանական խմբի. դեղին կեղևով և պտղամսով, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխ. կանոնակարգի»և «Սննդամթերքի անվտանգության մասին»ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	0.60
Խնձոր	Խնձոր միջին չափի, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1	0.34

Ծանոթություն

Ծառայությունը մատուցվելու է համաձայն առաջարկված միավոր գների՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով տվյալ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

Ծառայության ընթացքում ապրանքների տրամադրումն իրականացվում է կատարողի կողմից՝ հանձնելով ՀՀ կրթության և գիտության նախարարություն /հասցեն՝ Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2/

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ն. Պետրոսյան

Հավելված 2

<< 08 >> << 02 >> 2018թ կնքված

N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-18/ 1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Չափաբաժին	Ծառայության անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման << 2018թվականի պետական բյուջեի՝ 09.08.01.01 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրից, ընդ որում՝												
				1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			Ընդամենը
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև 10-ը/	
1	Ներկայացուցչական ծառայություններ	79111200-1	4237		100.0	150.0	230.0	355.0	480.0	560.0	685.0	810.0	955.0	1100.0	1300.0	1300.0

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ն. Պետրոսյան